Մարդու
Իրավունքների
Տուն
Երևան

Քաղաքացիական հասարակության թիրախավորումը 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ընթացքում

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան, 2021 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Դրանց անցկացումը պայմանավորված էր 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Հայաստանում ստեղծված նոր իրողություններով. պատերազմի արդյունքում հայկական կողմի կրած մարդկային ու տարածքային մեծ կորուստները, հայկական կողմի պարտությունն ամրագրող հայտարարություն-պայմանագիրը[1], դրան հաջորդած ներքաղաքական լարումնային գործընթացները և պառակտումներն անխուսափելի դարձրին արտահերթ խորհրդարանական ընտրությունների միջոցով նոր իշխանությունների ձևավորման օրակարգը: Ժողովրդավար ընտրությունների արդյունքում հասարակության քվեն պիտի լեգիտիմություն հաղորդեր ձևավորվելիք իշխանություններին՝ ապահովելով իշխանությունների հետագա բնականոն ու անցնցում գործունեությունը, նախանշելով երկրի ապագա ներքին ու արտաքին քաղաքական կուրսի վերաբերյալ հասարակության կոնսենսուսը: Արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման անհրաժեշտության մասին ամիսներ շարունակ բարձրաձայնում էին թե՛ տարբեր քաղաքական ուժերի և թե՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները[2]:

Արտահերթ խորհրդարանական ընտրությունները նշանակվեցին 2021 թվականի հունիսի 20-ին: Ընտրությունների համար գրանցված կուսակցությունների (այդ թվում՝ կուսակցությունների դաշինքների) ընդհանուր թիվը 26-ն էր, որոնցից ընտրություններին փաստացի մասնակցեցին 25-ը: Նախընտրական քարոզչությունը ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն իրականացվեց 2021 հունիսի 7-ից մինչև հունիսի 18-ն ընկած ժամանակահատվածում: Քվեարկության վերջնական արդյունքներով առաջատարը Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն է՝ քվեների 53,91 տոկոսով, երկրորդը՝ «Հայաստան» դաշինքը՝ 21,09 տոկոս, երրորդը՝ «Պատիվ ունեմ» դաշինքը՝ 5,22 տոկոս[3]:

Ընտրություններին դիտորդական առաքելություն են իրականացրել ինչպես միջազգային կազմակերպություններ[4] ու օտարերկրյա հասարակական կազմակերպություններ[5], այնպես էլ տեղական կազմակերպություններ: Ըստ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության համատեղ հայտարարության (նախնական գնահատականի)՝ 2021 թվականի հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետությունում կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով

---

[1] Հայտարարությունը ստորագրվել է 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ Հայաստանի վարչապետի, Ադրբեջանի ու Ռուսաստանի նախագահների միջև, տես Հայաստանի վարչապետի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների հայտարարությունը (azatutyun.am):

[2] Տես Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հայտարարությունը՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հրամայականի մասին | Իրազեկ քաղաքացիների միավորում (uic.am):

[3] Քվեարկության արդյունքներով ձևավորվելիք 8-րդ գումարման Ազգային ժողովը կունենա 107 պատգամավոր, որից «Քաղաքացիական պայմանագիրը»՝ 71, «Հայաստան» դաշինքը՝ 29, «Պատիվ ունեմ»-ը՝ 7: Ավելի մանրամասն տես ՔՊ-ն՝ 53.91, «Հայաստան»-ը՝ 21.09, «Պատիվ ունեմ»-ը՝ 5.22 տոկոս. ընտրությունների վերջնական արդյունքները (azatutyun.am):

[4] Ամբողջական ցանկը տես dit20.06.21m.pdf (elections.am):

[5] Մասնավորապես՝ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը (տես Իրազեկ քաղաքացիների միավորում | (uic.am)), ինչպես նաև «Ականատես» դիտորդական առաքելությունը (տես Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (transparency.am)):

կարճ ժամանակահատվածում[6]: Այդուհանդերձ, թե՛ միջազգային դիտորդների և թե՛ տեղական դիտորդների կողմից արձանագրվել են անհանգստացնող միտումներ՝ առավելապես կապված հասարակության տարբեր խմբերի միջև առկա բևեռացման խորացման առումով[7]:

[6] Տես INTERNATIONAL ELECTION OBSERVATION (osce.org): Դիտորդական առաքելություն իրականացնող տեղական կազմակերպությունների հայտարարության համար տես, օրինակ, Անկախ դիտորդ: 2021 թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության երկարաժամկետ դիտարկման ամփոփում, տես նաև 1624299724-1-664266.pdf (transparency.am):

[7] Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության հայտարարության մեջ, մասնավորապես, նշվում է, որ մրցունակ և, ընդհանուր առմամբ, պատշաճ կերպով կառավարված լինելով հանդերձ՝ դրանք (ընտրությունները՝ ՄԻՏ Երևան) բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և առանցքային մասնակիցների աճող սադրիչ հռետորաբանությամբ, INTERNATIONAL ELECTION OBSERVATION (osce.org): Իսկ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի գնահատմամբ. «Շարունակական բնույթ կրեցին ընտանիքների, երեխաների թիրախավորումը: Այս վարքագիծը բացասական կորագծով արտահայտվում է նաև հասարակական հարաբերություններում: Խորանում են տարբեր քաղաքական ուղղվածություն ունեցող խմբերի միջև անջրպետները:», Անկախ դիտորդ: 2021 թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության երկարաժամկետ դիտարկման ամփոփում (hcav.am):

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մարդու իրավունքների տուն Երևանը (ՄԻՏ Երևան), հավատարիմ իրավապաշտպաններին աջակցելու, պաշտպանելու և նրանց իրավունքներն առաջխաղացնելու իր առաքելությանը, մշտադիտարկել է ընտրությունների ընթացքում քաղաքացիական հասարակության թիրախավորման դեպքերը: Մշտադիտարկումն իրականացվել է նախընտրական քարոզչության, դրան նախորդող ու հաջորդող ժամանակահատվածում: Բացի այդ՝ վերլուծության են ենթարկվել ընտրություններին մասնակից կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը՝ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, իրավահավասարության ու խտրականության վերաբերյալ դրանց մոտեցումները վերհանելու նպատակով:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

ՄԻՏ Երևանի կողմից ուսումնասիրվել են ընտրություններին մասնակցած 25 կուսակցություններից (այդ թվում՝ կուսակցությունների դաշինքներից) 22-ի նախընտրական ծրագրերը, նաև՝ բուկլետները[8]: 22 նախընտրական ծրագրերից 13-ում մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին, ըստ էության, անդրադարձ կատարված չէ: Հատկանշական է, որ մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին առնչվող հարցերը հիմնականում քննարկվում են ժողովրդաիշխանության իրացման ձևերի (հանրաքվեներ, քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք և այլն), նախընտրելի կառավարման ձևերի (կիսանախագահական, պառլամենտական), իրավունքի գերակայությանն առնչվող հարցերի հետ մեկտեղ: Սույն վերլուծության մեջ մենք ևս մարդու իրավունքների հիմնահարցը քննարկում ենք այլ հարակից հարցերի համատեքստում: Այսպես՝ 9 նախընտրական ծրագրերից 2-ի դեպքում («Հայ ազգային կոնգրես» կուսակցություն և «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն) ծրագրային դրույթները բացառապես վերաբերում են կառավարման ձևին[9], մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին, ըստ էության, որևէ անդրադարձ կատարված չէ: Մնացած 7 նախընտրական ծրագրերից 2-ում՝ «Միասնական հայրենիք» կուսակցության և «Վերելք» կուսակցության դեպքում, մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին անդրադարձը հպանցիկ է, իսկ «Լուսավոր Հայաստան» կուսակցության դեպքում՝ առավելապես ընդհանրական՝ անհատ-հասարակություն-պետություն համատեքստում: Մնացած 4 կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) մարդու իրավունքներին կատարել են առավել մանրամասն անդրադարձ: Դրանք են՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Պատիվ ունեմ» դաշինքը, «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և «Հայաստան» դաշինքը: Նշված 5 կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից) ամենաներառականը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Քաղաքացու որոշում» ՍԴ կուսակցության նախընտրական ծրագրերն են: Առաջինի դեպքում, մասնավորապես, խոսվում է բռնության, ատելության, թշնամանքի, խտրականության դեմ պայքարում՝ ժողովրդավարությունը պաշտպանելու և իրավունքի չարաշահման դեպքերը կանխելու նպատակով օրենդրության հետագա կատարելագործման մասին: Ավելին՝ հատուկ անդրադարձ է կատարված իրավապաշտպաններին. *«Մենք երաշխավորելու ենք նաև իրավապաշտպանների համար իրապես ազատ և անխոչընդոտ գործունեության իրավական և գործնական պայմաններ»*: Երկրորդի՝ «Քաղաքացու որոշում» ՍԴ կուսակցության դեպքում, որպես ծրագրային դրույթ, հստակ ամրագրված է հետևյալը. «Նպաստել խտրականության բացակայությանը, գենդերային հավասարությանը և հնարավորությունների հավասարությանը բոլորի համար՝ անհատական, ընտանեկան, աշխատանքային և հասարակական կյանքի ոլորտներում...»: Ինչ վերաբերում է «Պատիվ ունեմ» դաշինքին և «Հայաստան» դաշինքին, ապա դրանցից առաջինի նախընտրական

[8] Մնացած 3-ի դեպքում նախընտրական ծրագրերը առցանց չեն գտնվել:
[9] Ի դեպ, 2-ն էլ նախապատվությունը տալիս են կիսանախագահական կառավարման ձևին:

ծրագրում մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին վերաբերող հատվածում առավելապես շեշտադրվում են դրանց պաշտպանության սահմանադրական ու դատավարական երաշխիքների ու կառուցակարգերի նախատեսման անհրաժեշտությունը՝ առանց իրավահավասարությանն ու խտրականությանն **ըստ էության** անդրադարձ կատարելու: Խոսվում է նաև «քաղաքացու նոր տեսակի» ձևավորմանը նպաստելու մասին. «անհատի, ով արմատներով ազգային է, պաշտում է հայրենի հողը, իր երջանկությունը չի պատկերացնում առանց հայրենիքի, օրինապաշտ է»: Ինչ վերաբերում է «Հայաստան» դաշինքին, ապա իրավահավասարությանն ու խտրականության բացառմանը, որպես այդպիսին, անդրադարձ կատարված չէ: Առանձին դրույթ է նախատեսված ապատեղեկատվության դեմ պայքարի վերաբերյալ, այսպես. «Չխաթարելով ազատ խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը՝ կներդրվեն նոր կառուցակարգեր, որոնք կկանխարգելեն կեղծ լուրերի մշտական շրջանառությունը, հասարակական կարծիքի մանիպուլյատիվ սխեմաները, անձնավորված կամ ներազգային թշնամանքը, ատելության խոսքը, պետական ինստիտուտների վարկաբեկումն ու նսեմացումը»: Խոսվում է նաև դատական համակարգի վրա քաղաքական իշխանության ճնշումները բացառելու, քաղաքական դրդապատճառով անձին ազատությունից զրկելու արատավոր պրակտիկան վերացնելու մասին:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄԸ

Այսպես՝ ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի կողմից քաղաքացիական հասարակությունը (քաղաքացիական հասարակության կազմակերպությունները) առավելապես թիրախավորվել են արմատական ընդդիմադիր քաղաքական ուժերի և դրանց հարող շրջանակների, այդ թվում՝ լրատվամիջոցների կողմից: Ապատեղեկատվությունն ու ատելության խոսքը, սպառնալիքները, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակելու վերաբերյալ հայտարարությունները, գրեթե մշտապես առկա են եղել այդ քաղաքական ուժերի խոսույթում: Հասարակության լայն զանգվածների շրջանակներում գործող իշխանություններին վարկաբեկելու նպատակով վերջիններս բնորոշվում են որպես օտարեկրյա ֆինանսավորմամբ գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ազդեցությամբ գործող ուժեր, որոնց նպատակն է կազմաքանդել պետական ու ազգային ինստիտուտները (եկեղեցի, բանակ, ընտանիք և այլն), ուժեղացնել օտարերկրյա «ոչ բարեկամ» պետությունների ազդեցությունը երկրի ներսում, ոտնահարել ազգային արժեքները, թուլացնել ազգային անվտանգությունը: Ըստ այդմ՝ այդ կազմակերպությունների «կազմաքանդիչ» գործունեությանը վերջ տալու նպատակով նախևառաջ անհրաժեշտ է ձերբազատվել գործող իշխանություններից:

Այսպես՝ ընտրություններին մասնակից և քվեարկության արդյունքներով երկրորդ տեղը զբաղեցրած «Հայաստան» դաշինքի ցուցակը գլխավորող Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, մասնավորապես, 2021 թվականի հունիս 11-ին Եղվարդում կայացած նախընտրական հանդիպման ժամանակ նշում է. «3 տարվա ընթացքում երկու ոլորտ է եղել, որոնց վրա եղել է համակարգված հարձակում», ապա մանրամասնում. «Մեկը բանակի վրա՝ հենց 2018-ից, երկրորդը՝ ազգային գաղափարախոսության վրա. «սորոսականները» մտան պետական համակարգ, սկսեցին վերանայել ծրագրերը, հարձակվեցին եկեղեցու վրա. սա պատահական չէր: Եթե այստեղից դասեր չքաղենք և չուժեղացնենք այս երկու գործոնները դատապարտված ենք լինելու մշտական ճգնաժամերում լինելու, մշտապես վտանգներ ենք ունենալու»[10]:

Նշվածը Ռ. Քոչարյանի կողմից քաղաքացիական հասարակությունը թիրախավորելու բազմաթիվ դեպքերից միայն մեկն է: Այսպես՝ դեռևս քարոզարշավին նախորդող շրջանում Ռ. Քոչարյանը հերթական հանդիպումներից մեկի ժամանակ խոսում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին՝ նշելով. «Պետությունն այստեղ շատ լուրջ անելիք ունի և չի կարող մի կողմ քաշվել ու սերնդի դաստիարակությունը թողնել դրսից ֆինանսավորվող մի քանի կազմակերպության վրա, հատկապես՝ Հայաստանի պես փոքր երկրում»: Հարցը դիտարկելով Հայաստանին սպառնացող աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային վտանգների դիրքերից՝ Ռ. Քոչարյանը նշում է. «Հասկանալի է, որ բավականին փոքր գումարներով այստեղ կարելի է այնպիսի տրամադրու-

[10] «Շնաձուկն անընդհատ շարժի մեջ պետք է լինի, ագրեսիվ կեցվածք պետք է ունենա. նման մի երևույթ ունենք այսօրվա իշխանության մոտ, իրենց ԴՆԹ-ն սա է Ռոբերտ Քոչարյան (տեսանյութ) - Լուրեր Հայաստանից (tert.am):

թյուններ գեներացնել, որ դրանք ժամանակի ընթացքում սպառնալիք կդառնան»: Ամենայն հավանականությամբ նկատի ունենալով ներկայիս իշխանություններին, որում քաղաքացիական հասարակության մի շարք նախկին ներկայացուցիչներ ներգրավված են ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության կազմում, նշում է. «Եթե շատ ակտիվ երիտասարդության մի հատված այդ քարոզչության ազդեցության տակ մի քանի տարի անընդմեջ աշխատի, հետո տարբեր դիրքեր ու պաշտոններ զբաղեցնի, ապա անդառնալի հետևանքներ ենք ունենալու մեր երկրի համար»: «Երկիրն ու ժողովրդին պետք է պաշտպանել այդ կարգի ազդեցություններից»,- եզրափակում է Ռ. Քոչարյանը[11]: «Պետության կազմաքանդմանը լծված զանազան սորոսական ՀԿ-ներին» պետական համակարգից հեռու պահելու անհրաժեշտության մասին խոսվում է PastInfo.am-ի 2021 թվականի հունիսի 9-ի վերլուծականում, ինչը, ըստ վերլուծականի, անհրաժեշտ է ՀԿ-ների կողմից, իբր, «քարոզչություն իրականացնելը» և «տեղեկատվություն հավաքելը» կանխելու նպատակով: «Պետական համակարգում պետք է ներգրավված լինեն բացառապես ազգային-պետական արժեհամակարգի կրողներ»,- նշվում է վերլուծականում[12]:

Ռ. Քոչարյանի թիրախում հատկապես «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» (ԲՀՀ) կազմակերպությունն էր. իրենց իշխանության գալու դեպքում, ինչպես հայտարարում էր, «սորոսական գրասենյակների գործունեությունը կամ արգելվի կամ խիստ սահմանափակումների կենթարկվի»[13]: Մեկ այլ հարցազրույցում անդրադառնալով այն փաստին, որ, այսպես կոչված, «Սորոսի գրասենյակը», այն է՝ ԲՀՀ-ն գրանցվել է դեռևս իր նախագահության տարիներին՝ Ռոբերտ Քոչարյանը հակադարձում է՝ նշելով, թե «Հայաստանում Սորոսի գրասենյակը նախկինում ուղղակի ոչ կառավարական կազմակերպություն էր, որը որևէ լուրջ ազդեցություն չի ունեցել երկրի ներքին գործընթացների վրա:»[14]: Կրկին՝ փորձելով ցույց տալ քաղաքական գործընթացների վրա քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մասնավորապես՝ ԲՀՀ-ի իբր ունեցած ազդեցությունը՝ Ռ. Քոչարյանը նշում է, որ եթե չլինեն, Հանրային հեռուստաընկերությունների ու, այսպես կոչված, Սորոսի գրասենյակների քարոզչությունը, ապա պարզ կլինի, որ երկրի առջև ծառացած երեք հիմնական խնդիրներն են, առաջինը՝ անվտանգությունը, երկրորդը՝ տնտեսական խնդիրները և երրորդը՝ երկրի բարոյահոգեբանական վիճակը[15]:

Քաղաքացիական հասարակության կազմակերությունների թիրախավորումը, ինչպես արդեն նշել ենք, զգալի էր նաև նախկին իշխանություններին հարող և նրանց ազդեցության տակ գտնվող լրատվամիջոցների լրահոսում: Այսպես՝ Politik.am լրատվական կայքը 2021 թվականի հունիս 7-ին հրապարակեց մի հոդված[16], որտեղ անդադարձ էր կատարվում ՀՀ ԱԱԾ տնօրենի նախկին ժամանակավոր պաշտոնակատար Միքայել Համբարձումյանի՝ ավելի վաղ տված հարցազրույցին: Հոդվածում առաջ էր քաշվում ՀՀ վարչապետի այդ ժամանակվա պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի՝ «Շակալ» անվանմամբ արևմտյան գործակալ լինելու վարկածը, որը պիտի օտարերկրյա հիմնադրամներից ներգրավված միջոցների հաշվին Հայաստանում իրականացներ

[11] Տեսանյութը տես ամբողջությամբ (1) Ռոբերտ Քոչարյանը՝ դատարանների բեռնաթափման և դրսից սնվող ՀԿ-ների և մասին - YouTube:
[12] Կասկածելի-օտար աղբյուրներից սնվող հ/կ-ների շրջանում սանացիայի իրականացումը՝ որպես նոր իշխանության առաջնահերթություն (pastinfo.am):
[13] Քոչարյանը հայտարարել է «սորոսական գրասենյակների» գործունեությունն արգելելու կամ խիստ սահմանափակելու մտադրության մասին (armenpress.am):
[14] Սորոսի արժեքները Հայաստանին տանում են ինքնաոչնչացման. ՀՀ երկրորդ նախագահ. «Sputnik Արմենիա» (antifake.am):
[15] Ռոբերտ Քոչարյանը քաղաքացիներին առաջարկում է երեք քայլ (news.am):
[16] Փաշինյանը եղել է արևմտյան գործակալ և գործել է «Շակալ» ծածկանվան տակ. սենսացիոն բացահայտում (politik.am):

գունավոր հեղափոխություն: Ինչպես կարդում ենք հոդվածում՝ «[Շակալը] կատարելապես էր պատրաստ ավերիչ գործողությունների, իսկ գործը գլուխ բերելու համար գումարի պակաս չկար. բարեգործական ու բարձրահունչ այլ անվանումների տակ երկրում գործում էին օտարերկրյա հիմնադրամներ՝ «USAID, NDI, Freedoom House, «Բաց հասարակություն-Հայաստան»..., որոնցից հոսում էին ֆինանսական հսկայական միջոցներ: Այդ կառույցները շռայլ էին նաև մարդկային ռեսուրսների տրամադրման հարցում, անգնահատելի էին գունավոր հեղափոխությունների իրենց հսկայական փորձով ու ցուցումներով»[17]:

News.am լրատվական կայքը նախընտրական քարոզարշավի մեկնարկի օրը՝ 2021 թվականի հունիսի 7-ին, տարածեց ՀՀ ՊՆ նախկին փոխնախարար, ՀՀԿ անդամ Արտակ Զաքարյանի ֆեյսբուքյան գրառումը, որտեղ նախկին փոխնախարարը կատարում է պնդում առ այն, որ Նիկոլ Փաշինյանի վերընտրությունն անհրաժեշտ է Թուրքիային ու Ադրբեջանին՝ որպես «Թուրքիան Ադրբեջանին կապելու և թուրքական աշխարհը միավորելու վերջին շանս», որի համար վերջիններս, ի թիվս այլնի, գործի են դնելու «սորոսական կայքերը»: «Հետևաբար, Թուրքիան և Ադրբեջանը, քարոզչական տեխնոլոգիաներով, սորոսական կայքերով, սոցցանցերում ունեցած ազդեցությամբ, ամեն ինչ անելու են, որպեսզի Հայաստանում ազգային ընդդիմադիր ուժերը չգան իշխանության: Նրանց իշխանության գալու պարագայում գրեթե բացառվում է, որ Հայաստանը առիթ տա թուրք-ադրբեջանական տանդեմին՝ իր արյունոտ ծրագրերն իրականացնելու համար: Իսկ Նիկոլն արդեն փորձարկված է, և հաջորդ պատերազմի համար՝ թուրքերի միակ նախընտրելի վարչապետը»,- նշում է Ա. Զաքարյանը[18]:

Նշվածից բացի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մեղադրվել են գործող իշխանություններին ծառայելու և իրենց իսկ առաքելությանը հավատարիմ չմնալու մեջ: Այսպես՝ բլոգեր Կարեն Վրթանեսյանը, փորձելով ներկայացնել գործող իշխանության պարտությանը հաջորդող իրավիճակը, գրում է. «Նախ՝ միանգամից՝ ռուբիլնիկի մեկ շարժումով, կմիանան սորոսական և արևմտյան բոլոր այլ ցանցերը, որոնք այս 3 տարի քնած էին ու «չէին նկատում», թե ինչպես էր Նիկոլը ոտնահարում այն արժեքները, որոնց համար նրանք, իբր, կոչված են պայքարելու: Սրանք մեծ ոգևորությամբ կսկսեն նորից փչել «արնախում նախկինների» փուչիկը: Երկրորդը, Արևմուտքը միանգամից կզարթնի ու կսկսի նկատել բաներ, որոնք այս 3 տարում «չէր նկատում»[19]»:

Քննարկվող ժամանակահատվածում արձանագրվել է նաև ընտրություններին դիտորդների, մասնավորապես՝ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքից, ինչպես նաև լրագրողների թիրախավորում, այդ թվում՝ կեղծ օգտահաշիվների միջոցով: Այսպես՝ ինչպես նշում է Media.am լրատվական կայքում, «Margarita Garcia» օգտատերը մայիսի 11-ի ուշ երեկոյան գրառում է կատարել, թե ադրբեջանական տելեգրամյան ալիքներում տարածվում են սքրինշոթեր, որոնք իբրև փաստում էին, որ «Անկախ դիտորդ» դաշինքի համակարգողներից Անտոն Իվչենկոն գումարի դիմաց տեսանյութեր և այլ տեղեկություններ է փոխանցել ադրբեջանական կողմին, ապա հավելում. «Հետագայում պարզեցինք, որ տվյալ անձը ղեկավարում է դիտորդներին, ովքեր իբրև պետք է հսկեն, որ ընտրությունները չկեղծվեն»[20]: Մեկ այլ դեպքում՝ 9/21 ընտրատեղամասում «Հայաստան»

---

[18] Նույն տեղում:
[18] Նիկոլից կրկին պատերազմի հոտ է փչում. Արտակ Զաքարյան (news.am):
[19] Ի՞նչ ցույց տվեց քարոզարշավի մեկնարկը. Նիկոլն առաջին իսկ վայրկյանից բռնությունների է դիմում, սպառնում քաղաքացիական պատերազմով կամ բախումներով. Կարեն Վրթանեսյան (blognews.am):
[20] Ֆեյսբուքյան կեղծ հաշիվը դիտորդին հայտարարեց «Ադրբեջանի գործակալ» (media.am):

դաշինքի վստահված անձը քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում առաջացած միջադեպի ժամանակ անդրադառնալով «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանին՝ վիրավորական արտահայտություններ է հնչեցնում նրա հասցեին՝ ակնարկելով Դ. Իոաննիսյանի՝ իբր նույնասեռական լինելը: Նույն անձը նաև վիրավորանքներ է հասցնում քվեաթերթիկների հաշվարկին ներկա լրագրողներից մեկի՝ Անի Գրիգորյանի հասցեին՝ վարկաբեկելով նրան[21]: Բացի այդ՝ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի գործունեության վերաբերյալ կասկածներ հարուցելու և այդպիսով՝ դիտորդական առաքելությունն արժեզրկելու նպատակով քվեարկության գիշերը՝ քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում, դիտորդներին էլեկտրոնային նամակ էր ուղարկվել դիտորդական առաքելության համակարգողներից Անտոն Իվչենկոյի անունով բացված կեղծ էլեկտրոնային փոստից: Նամակով դիտորդներին ցուցում էր տրվում, որ «պետք է աչք փակել» «Քաղաքացիական պայմանագրի» օգտին կատարված ընտրախախտումների վրա: Դիտորդների՝ 2018 թվականի խորհրդարանական ընտրությունների բազան կասկածելի հանգամանքներում հասանալի էր դարձել այլ անձանց, ինչի հետևանքով հնարավոր էր դարձել նշված էլեկտրոնային նամակների ուղարկումը: Այս մասին իր ֆեյբուքյան էջում գրել էր Անտոն Իվչենկոն[22]:

Քննարկվող ժամանակահատվածում նաև արձանագրվել է Ռ. Քոչարյանի կողմից, մասնավորապես, լրագրողների նկատմամբ անհավասար վերաբերմունք դրսևորելու և այսպիսով՝ լրագրողների մասնագիտական գործունեության համար անհավասար և ոչ բարենպաստ պայմաններ ստեղծելու փաստը՝ պայմանավորված լրագրողների կողմից առաջադրված հարցերի բնույթով և (կամ) կոնկրետ լրատվամիջոցով: Այսպես՝ Ռ. Քոչարյանը, մի դեպքում, չցանկանալով պատասխանել «Ազատություն» ռադիոկայանի լրագրողի կողմից առաջադրված հարցին՝ հեգնում է՝ ասելով. «Դա Ձեր ոճի մեջ է»[23]: Մեկ այլ դեպքում՝ փորձելով խուսանավել Մեղրիի հանձնման վերաբերյալ դարձյալ «Ազատություն» ռադիոկայանի լրագրողի առաջադրած հարցից՝ Ռ. Քոչարյանը հակադարձում է լրագրողին, ասելով. «Դուք է(ծ)թիկայի մասին լսած կա՞ք, թե՞՝ չէ ընդհանրապես»: Սա այն դեպքում երբ, ինչպես լրագրողն է հավաստիացնում, Ռ. Քոչարյանն արդեն իսկ պատասխանել էր մնացած բոլոր լրագրողների հարցերին, և նոր հարցեր չկային[24]:

---

[21] Տես տեսանյութը՝ 00:50-01:30 հատվածում, https://www.facebook.com/factor.am/videos/129015055979937:
[22] https://www.facebook.com/anton.ivchenko/posts/10227215304908622:
[23] https://t.me/RadarARM/15491:
[24] https://www.facebook.com/artak.khulyan/posts/4244475998981488:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՄԻՏ Երևանի կողմից արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակից կուսակցությունների (այդ թվում՝ կուսակցությունների դաշինքի) նախընտրական ծրագրերի ուսումնասիրությունը, ինչպես նաև ընտրությունների ընթացքում քաղաքացիական հասարակության թիրախավորման դեպքերի մշտադիտարկման արդյունքները փաստում են.

- Կուսակցությունների (այդ թվում՝ կուսակցությունների դաշինքների) մեծ մասն իրենց նախընտրական ծրագրերում մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին վերաբերող ծրագրային դրույթներ, որպես այդպիսին, չեն նախատեսել, ինչը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չարժևորելուց զատ, ըստ էության արտացոլում է դրանց վերաբերմունքը ժողովրդավարական արժեքների, իրավական պետության ու իրավունքի գերակայության նկատմամբ: Մեր գնահատմամբ, նման մոտեցումը անտեսում է բոլորի մարդու իրավունքների հարգման, ապահովման և պաշտպանության միջոցով ժողովրդավարական պետության կայացման կարևորությունը:

- Կուսակցություններից (այդ թվում՝ կուսակցությունների դաշինքներից) որոշները, որոնց նախընտրական ծրագրերում, այնուամենայնիվ, անդրադարձ կա մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հիմնահարցին, դրանց հարցում որդեգրել են առավել ձևական, ոչ ներառական մոտեցում (մասնավորապես՝ «Պատիվ ունեմ» և «Հայաստան» դաշինքները): Ի տարբերություն նշվածների՝ «Քաղաքացիական պայմանագիր» և «Քաղաքացու որոշում» ՍԴ կուսակցությունները մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարցում առավելապես կարևորել են իրավահավասարությունն ու խտրականության բացառումը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները բացառապես թիրախավորվել են իրենց արմատական հռչակող ընդդիմադիր ուժերի կողմից: Այս ծայրահեղ աջական ուժերը շարունակաբար, հատկապես՝ նշանակալի քաղաքական իրադարձությունների համատեքստում, իրենց նեղ կուսակցական շահերի առաջմղման համար նսեմացնում են մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների հաստատման համար պայքարող քաղաքացիական հասարակության և իրավապաշտպանների գործունեությունը: Այս ուժերը հանրային-քաղաքական քննարկման դաշտ են նետում այն թեզը, թե գործող իշխանությունները սպասարկում են «դրսի ուժերի» շահերը՝ «սորոսական գրասենյակների» միջոցով, ավելին՝ գործող իշխանությունները ներկայացվում են որպես վերջիններիս ազդեցությամբ գործող «օտարերկրյա գործակալներ»: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու իրավապաշտպանները ներկայացվում են իբրև ազգային ու պետական ինստիտուտների, ավանդական ու ընտանեկան արժեքների դեմ գործող սուբյեկտներ: Այս համատեքստում «Հայաստան» դաշինքը գլխավորող Ռ. Քոչարյանն ուղղակիորեն հայտարարում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու ճանապարհով հասարակական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակելու, իսկ որոշների՝ «սորոսական գրասենյակների» դեպքում, դրանց գործունեությունն արգելելու մասին: Այդ ընդդիմադիր ուժերի կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ որպես իրավունքների ու հանրային շահերի պաշտպանության առաջամարտիկների նկատմամբ այդօրինակ վերաբերմունքն, ըստ

էության, ի չիք են դարձնում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, իրավական ու ժողովրդավարական պետության վերաբերյալ դրանց տեսլականը՝ նախընտրական ծրագրային դրույթները դարձնելով առոչինչ:

- Նշված նպատակին հասնելու համար այդ ընդդիմադիր ուժերի կողմից թիրախավորվում են ոչ միայն քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այլև՝ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները մասնավորապես, ինչն իրականացվում է նաև ենթադրյալ ոչ օրինական գործողությունների դիմելու ճանապարհով: Նշվածը ոտնձգություն է ազատ ու թափանցիկ ընտրությունների միջոցով իշխանափոխություն իրականացնելու՝ վերջին տարիներին հայաստանյան հասարակության կարևոր ձեռքբերման դեմ:

Կայք՝ https://www.hrhyerevan.org
Սոցիալական ցանց՝ https://www.facebook.com/HRHYerevan
https://www.twitter.com/HRHYerevan
https://www.instagram.com/HRHYerevan
Հեռ.՝ +374 10 329032
Էլ. հասցե՝ info@hrhyerevan.org
Հասցե՝ Հովսեփ Էմին 119/2, Երևան 0012, Հայաստան